

**ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԱՅՔԸ
ԱՐՄԵՆ ՀԱԿՈՒԹՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր**

Հոդվածում ներկայացվում է հարկման տեսանկյունից տրանսֆերային գնագոյացման կարգավորման էվոյուցիան՝ մեկնաբանելով գների ձևավորման առանձնահատկությունները կազմակերպությունների ներխմբային գործարքներում: Նաև վերլուծության է ենթարկվում տրանսֆերային գնագոյացման միջազգային փորձը, այն ներկայացնելով պատմականորեն տարբեր փուլերով: Ընդգծվում է տրանսֆերային գնագոյացման վերահսկողության մեթոդների կատարելագործման պատմական ընթացքը:

Բանալի բառեր - տրանսֆերային գին, հարկման բազա, շուկայական գին, հարկման կարգավորում, վերազգային կազմակերպություններ, գնագոյացման էվոյուցիա:

Տնտեսագիտությունը չափազանց դինամիկ գիտություն է, և հասարակական տնտեսական հարաբերությունների յուրաքանչյուր զարգացում նորովի դրսևորումներ ունի թե՛ տեսական, թե՛ կիրառական մակարդակներում: 2018 թվականից Հայաստանի Հանրապետությունում գործում է նոր «Հարկային օրենսգիրք», որով հարկային օրենսդրության մեծ առաջին անգամ ներմուծվել են տրանսֆերային գնագոյացման կարգավորումներ՝ փոխկապակցված հարկ վճարողների, նրանց միջև իրականացվող գործարքների և նմանատիպ խնդիրների բնագավառում:

Անգամ գործարարության ոլորտից հեռու ցանկացած անձ կարող է վկայակոչել, որ ձեռներեցը ձգտում է իր ապրանքը հնարավորինս վաճառել թանկ գնով, որպեսզի ստանա առավելագույն

շահույթ: Իրականում դա այդպես է, եթե վաճառքը չի իրականացվում ներխմբային կազմակերպություններում և գնորդների եկամուտները բնավ չեն ընդգրկվում վաճառողների համընդհանուր շահերի շրջանակում: Մակայն, երբ վաճառքն իրականացվում է ներխմբային տնտեսվարող կազմակերպությունների շրջանակում, որոնք ունեն միասնական տնտեսական շահեր, ապա նման դեպքերում վաճառքի գինը կարող է միտումնավոր սահմանվել շուկայականից ցածր կամ բարձր՝ նպատակ ունենալով հարկային տնտեսումների հաշվին ստանալու ընդհանրական ավելի մեծ շահույթ: Նման դեպքերում գործում է տրանսֆերային գնագոյացումը, որը հանդիսանում է կապակցված կողմ հանդիսացող կազմակերպություններում ֆինանսական արդյունքների կառավարման արդյունավետ գործիք:

Եվ պարտադիր չէ, որ տրանսֆերային գինը անպայման էականորեն շեղվի շուկայականից: Գործնականում այն կարող է սահմանվել այնպես, որ մոտ լինի շուկայական գներին, սակայն միաժամանակ ի գորու լինելի տեղափոխելու հարկման բազան հարկման բարձր դրույթաչափերի միջավայրից՝ ցածր դրույթաչափերի միջավայր, դրանով իսկ նվազեցնելով վերազգային կազմակերպության հարկային պարտավորությունները:

Մեխանիզմը ավելի լավ պատկերացնելու համար ընդունենք, որ վերազգային կազմակերպությունը մեկ ամսվա ընթացքում արտադրում է 1000 հատ համակարգիչ: Մայր գործարանը գտնվում է տնտեսապես զարգացած A երկրում, որտեղ արտադրվում են համակարգիչի բոլոր մասերը, իսկ տնտեսապես զարգացող՝ B երկրում գործում է դուստր կազմակերպությունը, որտեղ ընդամենը հավաքվում և կոմպլեկտավորվում են մայր գործարանից ստացված մասերը և հենց այդտեղ էլ ձևավորվում են վաճառքի ենթակա համակարգիչները: Արտադրական նման սխեման հատուկ է կառուցվում՝ թեթևացնելու վերազգային կազմակերպության հարկային բեռը, քանի որ A երկրում շահութահարկի դրույթաչափը 30% է, իսկ B երկրում՝ 5%:

Այսպես, միջազգային շուկայում համակարգչի վաճառքի գինը 3 000 ԱՄՆ դոլար է (\$), իսկ կազմակերպություններում միավորի թողարկման ինքնարժեքը՝ 1 800 (1 600՝ համակարգչի մասեր + 200՝ կոմպլեկտացիայի ծախսեր): Եթե համակարգիչները ամբողջությամբ կոմպլեկտավորվեին մայր գործարանում, ապա շահութահարկի ամսական գումարը կկազմեր՝ $1000 \text{ հատ} \times (3\,000 - 1\,800) \times 30\% = \$360\,000$: Վերազգային կազմակերպությունը, համախմբված հարկային պարտավորությունները կրճատելու նպատակով, միտումնավոր իր գործունեության հարկվող բազայի առյուծի բաժինը տեղափոխում է B երկիր, սահմանելով միավոր համակարգչի կիսաֆաբրիկատային կոմպլեկտի գծով ընդամենը \$1.700 տրանսֆերային գին, այն պատրվակով, որ վաճառում է ոչ թե ամբողջական պատրաստի արտադրանք, այլ ընդամենը՝ կիսաֆաբրիկատներ: Այս դեպքում, արդեն վերազգային կազմակերպության ամբողջական պարտավորությունները շահութահարկի գծով կկազմեն.

A երկրում 1000 հատ կիսաֆաբրիկատային կոմպլեկտ

$$1000 \times (\$1\,700 - \$1\,600) \times 30\% = \$30\,000$$

B երկրում 1000 հատ համակարգիչ.

$$1000 \times [(\$3\,000 - (\$1\,700 + \$200))] \times 5\% = \$55\,000$$

Ընդամենը ամսական շահութահարկի պարտավորություն՝ \$85 000:

Այսպիսով, վերազգային կազմակերպությունը, կիրառելով տրանսֆերային գին, հնարավորություն է ստեղծում միջազգային շուկայում համակարգիչների վաճառքի արդյունքում ձևավորվող շահութահարկի պարտավորությունը նվազեցնել \$360 000-ից, մինչև՝ \$85 000, քանի որ այդ գինը փաստորեն հարկային բազան բարձր դրույքաչափերի միջավայրից (A երկիր)՝ տեղափոխեց հարկման ցածր դրույքաչափերի միջավայր (B երկիր): Փաստորեն, A երկրից արտադրանքի գծով սահմանվեց համախմբված հարկ վճարող կազմակերպությունների միջև փոխանցվող գին, որը մասնագիտական

գրականությունում և օրենսդրական ակտերում ներկայանում է «տրանսֆերային գին» եզրույթով:


Այսպիսով, տրանսֆերային գնով վերազգային կազմակերպությունները փորձում են շեղվել հարկման ընդգրկուն բազայից, դրանով իսկ փորձելով խուսափել հարկային պարտավորություններից: Ներկայացված օրինակում A երկրում գործող կազմակերպությունը կարող էր իր արտադրանքի թողարկումը ամբողջացնել և արտահանել միջազգային շուկա՝ վաճառքի, բայց այդ ճանապարհը հարկման առումով նախընտրելի չէր, և այդ իսկ պատճառով արտադրանքը միջազգային շուկա հասավ տարանցիկ ճանապարհով, սահմանելով վաճառքի տրանսֆերային վաճառքի գին՝ շահութահարկի ցածր դրույթաչափ ունեցող B երկրում գործող և գնորդ հանդիսացող դուստր կազմակերպության համար, որն էլ պատրաստի արտադրանքը ամբողջովին վերավաճառեց միջազգային շուկայում, արդեն իսկ շուկայական գներով (տես գծապատկեր 1):

Ընդ որում, պետք չէ ենթադրել, որ տրանսֆերային գինը սահմանվում է միայն նվազեցված արժեքով: Այն կարող է սահմանվել նաև շուկայականից ավելի ուժացված արժեքով, երբ արհեստականորեն բարձր տրանսֆերային գնով արտադրանքը փոխանցվում է հարկային ցածր դրույթաչափեր կիրառող երկրից՝ դեպի բարձր դրույթաչափեր ունեցող երկիր:¹

Այսպես, վերոնշյալ օրինակում վերազգային կազմակերպությունը կարող է որոշում ընդունել B երկրում իրականացնելու ոչ միայն համակարգային մասերի կոմպլեկտացիա, այլև արտադրելու համակարգչային մոնիտորներ, որոնք թանկ գնով կփոխանցվեն A երկրում գործող կազմակերպությանը: Արդյունքում, մոնիտորների արտադրությունը B երկրում կհարկվի շահութահարկի

¹ **Пансков, А.В.** Трансферты внутри корпораций // Налоговая политика и практика. 2004. № 4. С. 21-25

նվազ դրույքաչափով, իսկ թանկ ինքնարժեքով մոնիտորը A երկրում կունենա հարկման ցածր բազա:



Գծապատկեր 1 *Տրանսֆերային գների գործունեության համընդհանուր մեխանիզմը՝ համախմբված հարկային պարտավորություններ ունեցող տարբեր երկրներում գործող կազմակերպություններում²*

Մասնագիտական գրականության մեջ տրանսֆերային գնագոյացման շարժառիթները հիմնականում ասոցացվում են հարկման հարաբերությունների հետ:³ Սակայն, հեղինակների մի մասը պնդում է, որ տրանսֆերային գնագոյացումը արդյունավետ գործիք է նաև ներկազմակերպչական տնտեսաշվարկի կազմակերպման համար և պետք չէ այն կազմակերպությունների համար ներկայացնել ընդամենը հարկային բեռի թեթևացման գործիք:⁴

² Կազմվել է հեղինակի կողմից:

³ **Башатов Ю.**, Что такое трансфертное ценообразование, //www. <https://daily.rbc.ua/rus/show/takoe-transfertnoe-tsenoobrazovanie-1443109942.html>.

⁴ **Рузакова О.В., Грышев А.П.**, Трансфертное ценообразование, возможности эффективной оценки, //Российское предпринимательство, 2008, #9.

Հարկման օպտիմալացման նպատակով տրանսֆերային գները դեռևս կիրառվեցին 1897 թվականին, երբ Վեստի եղբայրները սահմանեցին իրենց ենթակայության տակ գտնվող բոլոր ձեռնարկությունների միջև պայմանագրային գնային համակարգ այն նկատառումով, որ շահույթը առավելապես կուտակվի օֆշորային գոտիներում գործող ստորաբաժանումներում՝ ի հաշիվ ցածր դրույքաչափերով հարկման:⁵ Տրանսֆերտային գնագոյացման կարգավորման առաջին փորձերը արվեցին Միացյալ Թագավորությունում՝ 1915 թվականին և ԱՄՆ-ում՝ 1917 թվականին, սակայն տվյալ ժամանակաշրջանում այդ թեման այդքան էլ արդիական չէր: Թերևս միայն 1960-ական թվականներին տրանսֆերային գնագոյացման նկատմամբ տնտեսագիտական հանրությունը մեծ հետաքրքրություն ցուցաբերեց, քանի որ վերազգային տնտեսությունները իրենց գործարքներով էական տեսակարար կշիռ զբաղեցրին համաշխարհային շուկայում:⁶

Արդեն իսկ 1970-ական հասունացավ տրանսֆերային գնագոյացման հարկման վերահսկման հիմնախնդիրը, որն իր կարգավորումներին էր սպասում տարբեր փաստաթղթերով: Շրջանառության մեջ մտավ «Տրանսֆերային գնագոյացման գծով վերազգային կազմակերպությունների և հարկման մարմինների ուղեցույցը»⁷, որտեղ տրանսֆերային գներով գործարքները իրենց առանձնահատուկ հարկային պարտավորությունների վերաբերյալ կարգավորումներ ստացան, որոնք մինչ այժմ էլ շարունակաբար վերանայվում ու բարելավվում են:⁸

⁵ **Шэксон Николас.** Люди, обокравшие мир. Правда и вымысел о современных офшорных зонах / Пер. с англ. А.А. Калинина. М.: Эксмо, 2012. С. 48

⁶ **Баранова А. Б.,** История зарождения трансфертного ценообразования: проблемы, риски, возможные решения, // Молодой ученый, # 19, 2015, стр. 356-359

⁷ Transfer pricing Guidelines for multinational enterprises and tax administrations, 1979.

⁸ **Смирнов, Д. А., Бабенко Д. А.** Инструменты минимизации рисков, связанных с применением правил контроля трансфертного ценообразовани./Имущественные отношения в Российской Федерации. 2015. № 6. с. 85–93.

Այսպես, Եվրախորհուրդը տրանսֆերային գնագոյացումը ներառեց «Եվրամիությունում տնտեսավարման վարքագծի կանոններում»⁹, իսկ այնուհետև մշակեց «Միջխմբային ծառայությունների ցածր արժեքով գնահատման ուղեցույց»¹⁰, իսկ մինչ այդ, ՄԱԿ-ը սկսեց զարգացող երկրների համար պարբերաբար հրապարակել «Միջազգային եկամուտների հարկման հաշվետվություն»:¹¹ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունում (ՏՀԶԿ) ներկայումս գործում է «Ֆիսկալ ոլորտի կոմիտե» (Committee on Fiscal Affairs), որի գործառույթներից է համարվում տրանսֆերտային գնագոյացման հարկման գործառույթների կարգավորումը: Ավելին, վերազգային կազմակերպությունների կողմից, տրանսֆերային գների միջոցով համաշխարհային շուկայում հարկային պարտավորություններից խուսափելու ներկայիս ակտիվացման ֆոնին, ՏՀԶԿ-ի կողմից 2016 թվականին «Հարկային բազային լվացման և հարկվող շահույթի թաքցման» փաստաթղթով (*Base Erosion and Profit Shifting*) ներկայացվեցին սահմանվող գների վերահսկողության նոր մոտեցումներ, որոնցով հնարավորինս կանխարգելվում են հարկման ռիսկերը:¹²

Ընդհանուր առմամբ, տրանսֆերային գնագոյացման նկատմամբ հարկային վերահսկողության էվոյուցիան պատմականորեն կարելի է ներկայացնել հետևյալ փուլերով.

- 1917-1930 թվականներ՝ «պարզած ձևերի հեռավորության» մոտեցման կիրարկում,
- 1960 -ական թվականներ՝ գների որոշման դասական մեթոդների կիրառում,
- 1970 - ական թվականներ՝ վերլուծական հաշվարկների և շահույթի բաշխման հիման վրա գների որոշման մեթոդների կիրարկում,

⁹ «Codes of conduct» by the EU Council.

¹⁰ Guidelones on low-value-adding intra-group services, accepted EU Council, 17 May, 2011.

¹¹ «International Income Taxation and Developing Countries» statements.

- 1980 – ական թվականներ՝ ոչ նյութական ակտիվների գնագոյացման մոտեցումներ,
- 1990-ական թվականներ՝ տրանսֆերային գնագոյացման հարկային վարչարարության ուժեղացում,
- 2000-2010 թվականներ – տրանսֆերային գնագոյացման հարկային վերահսկողության միջազգային համընդհանուր մոտեցումների մշակում:

Դեռևս 1917 թվականին ԱՄՆ ռազմական օրենսդրությունում ընդունվեց հատուկ դրույթ, որն ինչ-որ չափով կանխարգելում է գնագոյացման հետևանքով ձևավորվող կրկնակի հարկումը և միաժամանակ հարկային պարտավորություններից խուսափելը այն ռազմակաարքյունաբերական կազմակերպությունների համար, որոնք երկրից դուրս ունենին դուստր ընկերություններ:¹³ Դրանով պարտադրվում էր փոխկապակցված կազմակերպություններին ներկայացնել համախմբված հարկային հաշվետվություն, որը հարկային մարմինների կողմից լրացուցիչ քննվում էր «պարզած ձեռքի հեռավորության» մոտեցմամբ: Այսինքն, եթե կապակցված կողմերի միջև իրականացված առևտրային գործարքների գները էականորեն էին տարբերվում շուկայական իրական գներից, ապա այդ կազմակերպությունների հարկային պարտավորությունների ձևավորումն ու կատարումը խնդրահարույց էր համարվում:

Հետագայում, փոխկապակցված կազմակերպությունների միջև շուկայականից խիստ տարբերվող առևտրային գների կիրառումը այն աստիճանի ընդլայնվեց, որ ԱՄՆ կոնգրեսը 1921 թվականին ստիպված հարկման հատուկ ակտ ընդունեց Եկամտային հարկի օրենքում, որով կարգավորվում էին կազմակերպությունների խմբերի միջև եկամուտների ու ծախսերի բաշխումը, ինչպես նաև մեկ կազմակերպությունից մյուսը հարկային բազայի փոխանցման

¹² About BEPS and the inclusive framework, [//www.oecd.org/tax/beps/beps-about](http://www.oecd.org/tax/beps/beps-about)

¹³ Статья 78 Военного закона о доходах США от 03.10.1917 (War Revenue Act) <http://babel.hathitrust.org/cgi/pt?id=uc2.ark:/13960/t3fx78308;view=1up;seq=42>.

մեկնաբանություններ էին պահանջվում հարկային մարմինների կողմից:¹⁴ Տվյալ ակտը փոփոխության ենթարկվեց 1928 թվականին, երբ ԱՄՆ հարկային մարմիններին իրավունք վերապահվեց ճշգրտումներ կատարել փոխկապակցված կազմակերպությունների հարկային հաշվետվություններում, եթե նրանք փոխադարձ առևտրային գործարքներում խախտում էին «պարզած ձեռքի հեռավորության» սկզբունքը:¹⁵

Այդ ընթացքում, Եվրոպայում նույնպես միջոցներ ձեռնարկվեցին տրանսֆերային գնագոյացման հարկային ռիսկերի մեղմման ուղղությամբ, որի հիմքում նույնպես ընկած էր «պարզած ձեռքի հեռավորության» սկզբունքը, սակայն այստեղ առկա էր ևս մեկ առանձնահատկություն: Եվրոպական կազմակերպությունները, որոնք գտնվում էին փոխկապակցված խմբերում և ունեին համախմբված հարկային պարտավորություններ, շահույթի վերաբաշխում էին իրականացնում ոչ միայն տրանսֆերային գներով, այլև մեծամասնություն կազմող արտոնյալ բաժնետերերին վճարվող ուճացված շահաբաժիններով:¹⁶ Այս առումով, Ավստրիայի, Գերմանիայի, Լյուքսեմբուրգի, Շվեյցարիայի օրնադրական ակտերում հատուկ կետեր ներառվեցին, որոնք կանխարգելում էին «շահույթի գաղտնի բաշխման» մոտեցումները փոխկապակցված կազմակերպությունների միջև:

Վերազգային կազմակերպությունների գործունեության ընդլայնումը 1960-ական թվականներին նոր պահանջ առաջացրեց տրանսֆերային գների կարգավորման և վերահսկողության ոլորտում, քանի որ «պարզած ձեռքի հեռավորության» սկզբունքը այլևս չէր

¹⁴ Пункт d статьи 240 Закона о доходах США от 23.11.1921 (Revenue Act of 1921). [Электронный ресурс]//Сайт The Internet Archive. Режим обращения: <https://archive.org/details/cu31924032551222>

¹⁵ Закон о доходах США от 29.05.1928 (Revenue Act of 1928). www.constitution.org/uslaw/sal/045_itax.pdf. С. 806

¹⁶ Hamaekers H. Introduction to Transfer Pricing. IBFD Transfer Pricing Database (extract). P.2. // Introduction to Transfer Pricing. Leiden, International Tax Center Leiden, 2010.

բավարարում հարկային մարմինների գործառույթներով բացահայտելու հարկման թերություններերը: Կիրառության մեջ դրվեցին տրանսֆերային գների վերահսկողության նոր մոտեցումներ, ինչպիսիք էին՝

- շուկայական գների համեմատման մեթոդը,
- հաջորդիվ իրացման գնագոյացման մեթոդը,
- ծախսերի վրա հիմնված գնագոյացման սկզբունքները:

Թվարկած բոլոր մոտեցումներն էլ սերտ առնչություն ունեին «պարզած ձեռքի հեռավորության» սկզբունքի հետ և տրանսֆերային գնագոյացման վերահսկողության ժամանակ կիրառվում էին վերջինիս հետ զուգահեռ:

Այսպես, շուկայական գների համեմատման մեթոդի կիրառման պարագայում հարկային մարմինների կողմից համանման գործարքների գների տեղեկատվություն էր հավաքագրվում, որոնք իրականացվել էին միմյանցից անկախ կազմակերպությունների միջև, և դրանից հետո այդ տեղեկատվությունը համեմատվում էր արդեն փոխկապակցված կազմակերպությունների միջև կայացած գործարքների գների հետ:¹⁷

Հաջորդիվ իրացման գնագոյացման մեթոդով նախ որոշվում էր տվյալ գործարքներին առնչվող շահույթի շուկայական նորման, այնուհետև այն տարածվում էր միջխմբային գործարքների գների վրա, ճշտելու համար դրանց համապատասխանության աստիճանը գործող շուկայական գներին:

Նույնը վերաբերում էր տրանսֆերային գների գործարքների ծախսային մեթոդով գնահատումներին:

Արդեն իսկ 1970-ական թվականների տրանսֆերային գների միասնական կարգավորման համաշխարհային պահանջ զգացվեց և Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպությունումը այդ ուղղությամբ հատուկ զեկույց

¹⁷ The International Transfer-Pricing Debate. Canadian Tax Journal, 1995, Vol.43, No. 5, P. 1572. //www.ctf.ca/ctfweb/Documents/PDF/1995ctj/1995CTJ5_24_Steiss.pdf

հրապարակեց (*Transfer Pricing and Multinational Enterprises. OECD Report*)¹⁸: Հատկանշականն այն էր, որ տրանսֆերային գնագոյացման վերահսկողության վերոնշյալ երեք մեթոդներից բացի, այդ գեկույցով խրախուսվեց նաև չորրորդ մեթոդի կիրառումը, որը հիմնաված էր կապակցված կողմերի միջխմբային շահույթի բաշխման վերլուծությունների վրա: Այս դեպքում, արդեն համեմատման մեջ էին դրվում կապակցված կողմեր հանդիսացող յուրաքանչյուր կազմակերպության շահութաբերության ցուցանիշները նմանատիպ գործունեություն իրականացնող անկախ կազմակերպությունների շահութաբերության ցուցանիշների հետ, որով բացահայտվում էին գնագոյացման կեղծումները: Ավելին, զուգահեռաբար համեմատվում էին նաև կապակցված կազմակերպությունների ներխմբային շահութաբերության ցուցանիշները, որով հնարավորություն էր ստեղծվում բացահայտելու հարկման բազաների միտումնավոր փոխանցումները հարկման բարձր դրույքաչափ ունեցող միջավայրերից՝ դեպի ցածր դրույքաչափ ունեցող տնտեսավարման ոլորտներ:

Տրանսֆերային գնագոյացման կարգավորման միջազգայնացումը հանգեցրեց նրան, որ հատկապես ԱՄՆ վերազգային գլխամասային կազմակերպությունները այլ երկրների հարկային մարմիններից սկսեցին բողոքներ ստանալ՝ փոխկապակցված խմբերում հարկային պարտավորություններից մասայական խուսափելու դեպքերի գծով:¹⁹

Տրանսֆերային գնագոյացման կարգավորման և վերահսկողության խնդիրը բարդացավ հատկապես 1980-ական թվականներին, երբ միջազգային շուկայում մեծ թափ ստացավ գիտահետազոտական և կոնստրուկտորական աշխատանքների

¹⁸ Transfer Pricing and Multinational Enterprises. Report of the OECD Committee on Fiscal Affairs. Paris, 1979. www.keepeek.com/Digital-Asset-Management/oced/finance-and-investment/transfer-pricing-and-multinational-enterprises_9789264167773-en#page1

¹⁹ Steiss Carl F., Blanchette Luc. The International Transfer Pricing Debate. Canadian Tax Journal, 1995, Vol. 43, No. 5, P.1574

արդյունքների առք ու վաճառքը: Ձևավորվեց հարկերից խուսափելու վտանգավոր միտում. զարգացած տնտեսություն ունեցող երկրներում ստեղծվում էին նորարական մշակումներ, որոնք ցածր գներով վերազգային կազմակերպությունների շրջանակում վաճառվում էին զարգացող երկրներում գործող դուստր ընկերություններին՝ որպես ոչ նյութական ակտիվներ: Այստեղ արդեն, հարկային մարմինները դժվարություններ էին ունենում որոշելու տրասֆերային գնի հիմնավորվածությունը, քանի որ ոչ նյութական ներստեղծված ակտիվները յուրօրինակ և եզակի էին, և դրանով չէին տալիս շուկայում գնային համադրելիության հնարավորություն:²⁰

Արդյունքում ձևավորվեց մի իրավիճակ, որ հարկային դատական վեճերը հիմնականում լուծվում էին ի օգուտ հարկատուների, և ոչ՝ պետության: Ի վերջո, ստեղծված իրավիճակից դուրս գալու նպատակով ԱՄՆ-ում ընդունվեց ռոյալթիի դրույքաչափի բարձրացման կանոն (Superroyalty), որը պահանջում էր ոչ նյութական ակտիվը գնահատել հաշվապահական միջազգային ստանդարտների կանոններով, այն է՝ ոչ նյութական ակտիվի արժեքը պետք է որոշվեր ելնելով տեսանելի ապագայում նրա շահագործումից ակնկալվող օգուտներով:²¹ Այս կանոնը հետագայում տարածվեց տրանսֆերային գնագոյացման վրա, երբ ներխմբային կազմակերպությունների միջև ոչ նյութական ակտիվների առք ու վաճառքը հարկային մարմինները սկսեցին դիտարկել ակտիվի հետագա շահագործումից սպասվելիք եկամուտների (Going Forward Basis) կտրվածքով:²² Բնականաբար, այս պարագայում գնագոյացման խնդիրը չէր կապվում շուկայի հետ, այլ ամբողջությամբ հիմնված էր տնտեսական հեռանկարային

²⁰ Салимжанов И. К. Ценообразование _и_ налогообложение. Учебник / И. К. Салимжанов, О.В. Португалова, Е. А. Морозова; Под ред. И. К. Салимжанова. – М. Кнорус, 2002., с. 49-51

²¹ Закон США от 22.10.1986 № 99-514 «О реформе законодательства США в отношении внутренних доходов» (An Act to reform the internal revenue laws of the United States) http://ucop.edu/research-policy-analysis-coordination/_files/Public%20Law%2099-514.pdf (

²² General Explanation of the Tax Reform_ A_c_t_ of 1986, 100th Cong., 1st sess. 1016-17 (1987), Staff of joint Committee on Taxation of the United States https://archive.org/stream/generalexplanati00jcs1087/generalexplanati00jcs1087_djvu.txt

վերլուծությունների վրա: Ավելին, ԱՄՆ հարկային տեսչությունը երկրի հարկային օրենսգրքում 1989 թականին հատուկ պատժամիջոցներ և տուժեր նախատեսեց ոչ նյութական ակտիվների գծով անհրական տրանսֆերային գների սահմանման գծով:²³

Համարելով, որ գործող տույժերն ու տուգանքները բավարար չեն անհրական տրանսֆերային գների սահմանման դեմ պայքարում, ԱՄՆ կառավարությունը որոշում կայացրեց նոր պայքար սկսել տեղական և արտասահմանյան փոխկապակցված կազմակերպությունների միջև՝ հարկվող եկամուտների արդարացի բաշխման համար: Խնդիր դրվեց կանխարգելել հարկային բազայի փոխանցումը ԱՄՆ-ից հարկման ցածր դրույթաչափեր ունեցող երկրներ և 1990 թվականին ընդունվեց օտարերկրյա հարկային հավասարության պահպանման օրենսդրական ակտը (The Foreign Tax Equity Act):²⁴ Նաև, լայն քննադատության ենթարկվեց ԱՄՆ-ում գործող վերազգային այն կազմակերպությունների գործունեությունը, որոնք իրենց արտասահմանյան դուստր կազմակերպություններից ուռճացված տրանսֆերային գներով ապրանքներ ու ծառայություններ էին ձեռք բերում, դրանով իսկ ցույց տալով բարձր ինքնարժեք և ցածր հարկվող շահույթ:

Այդ ընթացքում Կանադայում նույաես միջոցներ ձեռնարկվեցին վերազգային կազմակերպություններում տրանսֆերային գների ձևավորման վերահսկողության ուղղությամբ, և երկրի հարկային օրենսգրքում ընդունվեցին դրույթներ, որոնք մի կողմից տրանսֆերային գնագոյացման հարկային վերահսկողությունը կարգավորում էին միջազգային համընդհանուր մոտեցումներով, մյուս կողմից՝ կանխարգելիչ դեր էին կատարում տարբեր երկրներում միևնույն կազմակերպության գործունեության կրկնակի հարկման

²³ Internal Revenue Code, Legal Information Institute, // <https://www.law.cornell.edu/uscode/text>

²⁴ Internal Revenue Code//PwC. International Transfer Pricing 2015/16. P. 1057, <http://www.pwc.com/gx/en/services/tax/transfer-pricing/itp-download.html>

ուղղությամբ: Այդ դրույթների համահեղինակներն էին Քարլ Սթեյսը (*Carl F. Steiss*), և Լյուք Բլանշեթը (*Luc Blanchette*)²⁵:

Ինչ վերաբերում է Եվրամիությանը, ապա տրանսֆերային գնագոյացման գծով դեռևս 1990 թվականին ընդունվեց «Փոխկապակցված կազմակերպությունների կրկնակի հարկման կանխարգելման և շահույթի ճշգրտման» կոնյունիկե (*Convention on the Elimination of Double Taxation in Connection with the Adjustment of Profits of Associated Enterprises*), համաձայն որի թույլատրվում էր հարկային բազաների սիմետրիկ ճշտումներ կոնտրազենտ կազմակերպություններում, բացառելու համար կրկնակի հարկումը տարբեր երկրներում:²⁶

Եվրահանձնաժողովը 2006 թվականին Եվրամիության շրջանակում ձևավորեց հատուկ կոմիտե (*The EU Joint Transfer Pricing Forum*), որը զբաղվում էր ոչ միայն կապակցված կազմակերպությունների միջև տրանսֆերային գների վերահսկողությամբ, գնագոյացման այդ տեսակի վեճերի լուծմամբ, այլև՝ կարգավորիչ փաստաթղթերի մշակմամբ:²⁷ Հատկապես կարևորվեց այդ կոմիտեի կողմից տնտեսական փոխհարաբերման վարքագծային կանոնների մշակումը (*Codes of Conduct*), որը այդ ժամանակների համար հեղափոխական քայլ էր համարվում: Կիրառության մեջ դրվեց մի փաստաթուղթ, որը համընդհանուր էր Եվրամիության բոլոր երկրների համար և ապահովում էր տրանսֆերային գների հիման վրա ձևավորվող եկամուտների թափանցիկ հաշվետվողականություն:²⁸

²⁵ **Steiss Carl F., Blanchette Luc.** The International Transfer-Pricing Debate. Canadian Tax Journal, 1995, Vol.43, No. 5, P. 1579, https://www.ctf.ca/ctfweb/Documents/PDF/1995ctj/1995CTJ5_24_Steiss.pdf

²⁶ **Steiss Carl F., Blanchette Luc.** The International Transfer-Pricing Debate. Canadian Tax Journal, 1995, Vol.43, No. 5, P. 1584.

²⁷ Joint Transfer Pricing Forum , http://ec.europa.eu/taxation_customs/taxation/company_tax/transfer_pricing/forum/index_en.htm

²⁸ **Fris P., Gonnet S.A.** European View on Transfer Pricing after Glaxo. 2006. P.2., http://www.nera.com/content/dam/nera/publications/archive1/PUBTP_after_Glaxo_TP1536.pdf

Ի վերջո, տրանսֆերային գնագոյացման կարգավորման խնդիրները դարձան ՄԱԿ-ի քննարկման առարկա և 2012 թվականին այդ կազմակերպության կողմից հրապարակվեց զարգացող երկրների համար ուղեցույց, նպատակ ունենալով աջակցելու տրանսֆերային գնագոյացման կարգավորմանը ինչպես հարկ վճարողների շրջանում, այնպես էլ այդ երկրների հարկային մարմինների գործառնություններում:²⁹

Հատկապես 2013 թվականը Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպության համար դիտարկվեց միջազգային հարթակում տրանսֆերային գնագոյացման ակտիվ քննարկման տարի: Սեպտեմբերին G 20 երկրների, իսկ այնուհետև նոյեմբերին՝ ևս 115 երկրների կողմից ընդունվեց տրանսֆերային գնագոյացման կարգավորման պլան՝ նախատեսված 2014-2016 թվականների համար, որտեղ հատուկ շեշտադրում կատարվեց հարկային բազաների երկրից երկիր տեղափոխման ռիսկերի գնահատմանը, գնագոյացման ձևի նկատմամբ բովանդակության առավելության սահմանմանը (*Substance over Form*) և վերազգային կազմակերպությունների համախմբված հարկային հաշվետվությունների թափանցիկության ապահովմանը:³⁰

Հայաստանի Հանրապետությունում տրանսֆերային գնագոյացման կարգավորումները առաջին անգամ ընդգրկվեցին «Հարկային օրենսգրքում», որն ընդունվեց 2016 թվականին:³¹ Օրենսգիրքը մեկնաբանում է փոխկապակցված հարկ վճարողների սահմանումը, նրանց միջև իրականացվող վերահսկվող գործարքները, պարզած ձեռքի հեռավորության սկզբունքը, գործարքների համադրելիությունը, չվերահսկվող գործարքների մասին տեղեկատվության աղբյուրները, վերլուծության ենթակա կողմի

²⁹ UN transfer pricing guidance for developing countries could increase burdens on multinationals. <http://www.pwc.com/us/en/washington-national-tax/newsletters/wnts/un-transfer-pricing-guidance-developing-countries.html>

³⁰ Action Plan on Base Erosion and Profit Shifting, <http://www.oecd.org/tax/beps/action-plan-on-base-erosion-and-profit-shifting-9789264202719-en.htm>

³¹ ՀՀ հարկային օրենսգրք, Եր. 2016, գլուխ 73, հոդվածներ 361-378:

ընտրությունը, հարկման նպատակներով տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորումը:

Մակայն հարկ ենք համարում նշելու, որ տրանսֆերային գնագոյացման կարգավորումը չպետք է դիտարկել միայն հարկման տեսանկյունից: Այն առաջատար կազմակերպություններում համարվում է ըստ պատասխանատվության կենտրոնների ֆինանսական արդյունքների ձևավորման կառավարչական արդյունավետ գործիք: Եվ քանի որ կառավարչական նման մեթոդաբանությունը ցանկացած կազմակերպությունում դիտարկվում է որպես առևտրային գաղտնիք, ապա այն բնավ չի հրապարակվում և իր կարգավորումն է ստանում միայն կազմակերպության ներսում:

Армен Акопян, Исторический процесс возникновения и развития регулирования и контроля трансфертного ценообразования - В статье представлена эволюция развития регулирования трансфертного ценообразования с точки зрения налогообложения, комментируя особенности ценообразования во внутрикорпоративных сделках. Кроме того, анализируется международный опыт трансфертного ценообразования, представляя его исторические этапы. Подчеркивается также процесс совершенствования методов управления трансфертным ценообразованием в мировой экономике.

Armen Hakobyan, Transfer pricing regulation and control origin and histiocal development process - The article have presented the evolution of transfer pricing regulation from taxation point of view, as well as commented the regulation of pricing in trancorporate transactions. In addition, the international experience of transfer pricing has analised, presented historical development`s stages. The author emphasizes the historical process of improving transfer pricing management in the global economy.